

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԴՊՐԱԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա
Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմվել է համայնքի ղեկավար՝

Հովհաննես Նազլուխանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 10.01.2017թ-ի թիվ 4-Ն որոշմամբ

ԴՊՐԱԲԱԿ 2017

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի ղեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երի՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվել է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

Համայնքի տեսլականն է՝

Դպրաբակ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

1. համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազվաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
2. համայնքում կաթի, մսի իրացման գործարկում,
3. համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
4. զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
5. համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
6. ներհամայնքային ճանապարհների նորոգում և պահպանում
7. արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
8. համայնքային կենտրոնի վերանորոգում
9. համայնքի մուր - մանկապարտեզի կառուցում
10. համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում
գյուղտեխնիկայի ձեռքբերում

11. Համայնքի գազաֆիկացում /արտաքին և ներքին ցանց/
12. Խմելու նոր ջրագծի /արտաքին ցանց/ երկ 2500 մ տրամագիծը 90 մմ.կառուցում
13. Դպրոցի տանիքի վերանորոգում,մարզադահլիճի և ներսի մասնակի վերանորոգում
14. Ամբուլատորիայի շենքի պատերի ամրացում
15. Համայնքի կենտրոնում գտնվող հին եկեղեցու վերանորոգում
16. Սողանքային գոտու ուսումնասիրություն

17. համայնքում ժամանցային կենտրոնի ստեղծում
18. Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների ստեղծում
19. ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
20. նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:
21. ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
22. համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործում

2.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն

Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Արեգունի և Միափորի լեռնաշղթաների միջև Ճամբարակից 25 կմ դեպի արևմուտք,Գետիկ գետի աջ և ձախ ափերին 4,2կմ երկարությամբ,Ճամբարակ-Դիլիջան մայրուղու վրա:Համայնքի տարածքով է անցնում Գեղարքունիքի մարզը Տաուշի մարզին կապող հանրապետական նշանակության ավտոճանապարհը:

Գյուղը շրջապատված է անտառներով:

1988թ-ին գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանի ՍՍՀ Շամխորի շրջանի Բարսում,Բարում և Մարտունի գյուղերից բռնագաղթված հայերով և նախկին Չայքենդ գյուղը վերանվանվել է Դպրաբակ:

Ծովի մակերևույթից գտնվում է 1250մ բարձրության վրա:Ունի մեղմ կլիմա,հրաշալի բնություն:Հեռավորությունը Երևանից 130կմ,մարզկենտրոնից 120կմ,տարածքը 4051հա՝ որից բնակավայրի տարածք 128հա,վարելահող 191հա,խոտհարք 487հա, արոտավայր 1537հա, արտադրական նշանակության 12 հա,հատուկ նշանակության 3 հա և համայնքային անտառներ 1548հա:

Աղյուսակ 1. Համայնքի վարչական տարածքի առկա և մշտական բնակչության տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Դպրաբակ	4051	625	545	264	240
	Ընդամենը	4051	625	545	264	240

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 625 մարդ, այդ թվում տղամարդիկ 295 և կանայք 330: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է **աղյուսակ 2-ում**:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԴՊՐԱԲԱԿ ՀԱՄԱՅՆՔ
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում	625
	Տղամարդիկ	295
	Կանայք	330
	0 – 6 տարեկան	45
	7-17 տարեկան	72
	18-63 տարեկան	396
2.	Կենսաթոշակառուներ	112
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
4.	Հաշմանդամներ	13
5.	Զբաղվածներ	52
6.	Ընտանեկան նպաստ ստացողներ	42

2.2 Համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակ

Աղյուսակ 3. Համայնքի տարեկան բյուջեն՝ ըստ եկամուտների և ծախսերի

	Եկամուտների անվանումը	Հոդված				
			Տարեկան	Ծախսերի անվանումը	Հոդված	Տարեկ.
1	Հարկային եկամուտներ			Աշխատավարձ	4111	9500,0
	Գույքահարկ ընդ.	7136	200,1	Էլ.էներգիա	4212	140,0
	ա/ շինություններ			Կապ	4214	66,0
	ֆիզիկական անձեր			Ներքին գործուղումներ	4221	400,0
	իրավաբանական անձեր			Համակարգչային ծառ.-ն	4234	35,0
	բ/ տրանսպորտ. միջոցներ		200,1	Թերթի բաժանորդագր.	4234	71,0
	ֆիզիկական անձեր			Մեքենայի ԱՊՊԱ	4215	35,0
	իրավաբանական անձեր			Տրանսպ.ծախս	4264	400,0
	Գույքահարկի ապառք			Նվիրատվություն	4819	30,0
2	Հողի հարկ	7131	820,0			
	Հողի հարկի կազմ.			Սոց.հատուկ արտոնութ.	4729	800,0
3	Պետական տուրք			Պարտադիր վճար	4823	50,0
4	Տեղական տուրքեր և վճար	71452	20,0	Պահուստային ֆոնդ	4891	1873,0
				Գրասեն.ապրանքներ	4261	100,0
5	Ոչ հարկային եկամուտներ					
	1. Հողի վարձավճար	7415	291,1			
	անցած տարիների ապառք					
	2. Խոտհարքի վարձավճար					
	անցած տարիների ապառք					
	3. Արոտների վարձավճար					
	անցած տարիների ապառք					
6	Համահարթեցմ. դոտացիա	7331	12118,6			
	անցած տարիների ապառք					
7	Պատվիրակված լիազոր.					
8	Տարեսկզբի ազատ մնաց.					
	ԸՆԴԱՄԵՆԸ		13500,0	ԸՆԴԱՄԵՆԸ		13500,0

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և կանխատեսումներ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

Համայնքի տնային տնտեսություններ մի մասը հաջողությամբ զբաղվում է մեղվապահությամբ: Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, զբաղվում են նաև պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, սալոր), մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունների մեծ մասը զարնանից մինչև գրեթե աշնան վերջը անասուններին արածեցնում են գյուղամերձ կամ հեռագնա արոտներում, չնայած արոտներ տանող ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

❖ Դպրաբակ գյուղի տարածքում գտնվում է 10-րդ դարում կառուցված եկեղեցու շենք որը ունի նորոգման կարիք, գյուղում առկա է նաև 17-րդ դարի գործող կամուրջ: Դպրաբակ գյուղը հարուստ է տեսարժան վայրերով իր չքնաղ բնությամբ կարող է առաջացնել զբոսաշրջային հետաքրքրություն: Գյուղի երկու կողմում գտնվում են Մուրղուզ լեռը 2993մ բարձրության և Կենացաբլուր լեռը 2428մ:

❖ Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց՝ 81 աշակերտով, դպրոցն ունի տանիքի, մարզադահլիճի և ներսի մասնակի վերանորոգման կարիք:

❖ Համայնքում չկա և չի եղել մսուր մանկապարտեզի շենք:

❖ Մինչև 2016թ համայնքում գործում էր ամբուլատորիան, որը սպասարկում էր շրջապատի հինգ գյուղերին, պատերից մեկի նստվածքի հետևանքով ամբուլատորիան ժամանակավոր տեղափոխվել է Ձորավանք համայնք ուստի շենքը ունի պատի ամրացման կարիք:

❖ Սոցիալական ծառայության համակարգում գրանցված են համայնքի 45 անապահով ընտանիքներ, որոնցից 40-ը ստանում են ընտանեկան նպաստ իսկ 5-ը՝ հրատապ օգնություն:

Համայնքի 2017-2021թթ բյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսում

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ տարեկան պլան	2017թ կանխ.	2015 թ փաստ. նկատ. տոկոս	2018թ կանխատ.	2015 թ փաստ. կանխ. տոկոս	2019թ կանխ.	2015թ փաստ. նկատ. տոկոս	2020թ կանխ.	2015 փաստ. նկատ. տոկոս	2021թ կանխ.	2015թ փաստ. նկատ. տոկոս
Ընդամենը եկամուտներ	11372,6	13500,0	118,7	14450,0	127,0	15590,0	137,0	16750,0	147,0	17910,0	157,0
Հարկային եկամուտներ, որից	1050,0	1040,0	99,0	1100,0	104,0	1190,0	113,0	1300,0	123,0	1410,0	134,0
Հողի հարկ	820,0	820,0	100,0	820,0	100,0	850,0	103,0	900,0	109,0	950,0	115,0
գույքահարկ	200,1	200,1	100,0	250,0	125,0	300,0	150,0	350,0	175,0	400,0	200,0
Տեղ. տուրք	30,0	20,0	66,0	30,0	100,0	40,0	133,0	50,0	166,0	60,0	200,0
Հողի վարձավճար	330,0	291,3	88,0	350,0	106,0	400,0	121,0	450,0	136,0	500,0	151,0
Համահարթ. դոտացիա	9992,5	12168,6	121,0	13000,0	130,0	14000,0	140,0	15000,0	150,0	16000,0	160,0
Ընդամենը մուտքեր	11372,6	13500,0	118,0	14450,0	127,0	15590,0	137,0	16750,0	147,0	17910,0	157,0
Ընդամենը ծախսեր	11372,6	13500,0	118,0	14450,0	127,0	15590,0	137,0	16750,0	147,0	17910,0	157,0

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Հիմնվելով համայնքում փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայումս առկա դժվարությունները և խոչընդոտները, որոնք խթան են հանդիսանում համայնքի զարգացման գործընթացում : Դրանք են

1. Համայնքը չունի գլխավոր հատակագիծ,
2. Զարգացնել գյուղատնտեսությունը անասնապահությունը, ավելացնել վայրի հավաքը.
3. Կազմակերպել բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին.
4. Կատարել ներհամայնքային և դաշտային ճանապարհների խճապատում և Հարթեցում
5. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգում.
6. Մանկապարտեզի կառուցում.
7. Դպրոցի վերանորոգում և վերազինում.
8. Հանդիսությունների սրահի վերանորոգում և գույքի նորացում .
9. Արտաքին նոր խմելու ջրագծի կառուցում 2500մետր երկարության 90մմ տրամագծով.

10. Մանկական խաղահրապարակի կառուցում.
11. Գազաֆիկացում արտաքին և ներքին ցանց.
12. Գյուղմթերքների պահպանման համար սառնարանային պահեստի կառուցում.
13. Գյուղտեխնիկայի ձեռքբերում.
14. Սողանքային տների ուսումնասիրություն.
15. Գետի հունի կարգավորում և ամրացում .
16. Տնկարանի ստեղծում
17. Մեղվաբուծության զարգացում համայնքի շահերին ծառայեցնելու նպատակով.
18. Ագրոտուրիզմի և տուրիզմի զարգացում:

բոլոր հիմնախնդիրներին , իրատեսականության տեսանկյունից նպատակահարմար է ներառել համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագրում հետևյալ ծրագրերի ցանկը, ըստ հնարավոր լուծման տարբերակների.

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերը

❖ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Համայնքը գտվում է ծովի մակարդակից 1150մետր բարձրության վրա, գյուղնշանակության հողերը բարձրանում են մինչև 2400մետր բարձրության , որով և պայմանավորված է համայնքի տարածքում առկա տարբեր խոտաբույսերի, դեղաբույսերի և անտառային տարբեր մրգերի և հատապտուղների մեծ պաշարը:
2. Համայնքում առկա է մեծ չափի 1450 հա արոտ, 1548 հա անտառ, մոտ 500 հա խոտհարք:
3. Համայնքի միջով հոսում է լեռնային Գետիկ գետը :
4. Համայնքի տարածքով հոսում է լեռնային 2 քաղցրահամ առվակ:
5. Անտառում առկա է մեծ քանակությամբ թափոններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Խմելու նոր ջրագծի դիամետր 90մմ երկարությունը 2500 մետր ունի կառուցման անհրաժեշտություն:
2. Խմելու ջրի ներցանցային համակարգի վերանորոգման կարիք:
3. Չկա մանկական խաղահրապարակ:
4. Սողանքների առկայություն:
5. Գազաֆիկացման բացակայություն:
6. Միջհամայնքային ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վատ վիճակ:

7. Կոյուղու համակարգի բացակայություն:
8. Դպրոցի տանիքի, մարզադահլիճի և ներսի մասնակի վերանորոգում:
9. Ամբուլատորիայի շենքի պատերի ամրացման անհրաժեշտություն:
10. Գյուղտեխնիկայի բացակայություն:
11. Գյուղմթերքների իրացման դժվարություն:
12. Հին եկեղեցու վերանորոգման կարիք:
13. Բյուջեի և եկամուտների սղություն

• ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բարձրագույն կրթության մասնագետների առկայություն.
2. Երիտասարդ աշխատուժի առկայություն.
3. Արտադրական աշխատանքներ կազմակերպելու հնարավորություններ.
4. Վայրի հավաքի մեծ չափերի հասցնելու հնարավորություն.
5. Մրգի, հատապտղի անտառային մրգերի մշակում.
6. Գյուղմթերքների վերամշակման հնարավորություն.
7. Անասնապահության/ մանր և խոշոր/ զարգացում.
8. Բնականից շրջապատված անտառային գոտին.
9. Ագրոտուրիզմի համար լավագույն պայմաններ
10. Տարբեր ճանապարհներով /աճուրդներ, վարձակալություն , հողի օտարում / միջոցներ ձեռք բերել ծրագրերում ներդնելու համար.
Աղքատությունը 10 տոկոս, համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ-10տոկոս, համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը 1տոկոս, նախորդ տարվա համեմատ:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Զ արգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

18. համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազվաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
19. համայնքում կաթի, մսի իրացման գործարկում,
20. համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
21. զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
22. ներհամայնքային ճանապարհների նորոգում և պահպանում
23. արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, տեղադրում,
24. ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
25. համայնքային կենտրոնի վերանորոգում
26. համայնքի մուր - մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների ավարտում

27. համայնքում առկա խաղահրապարակի համալրում

28. լրացուցիչ գյուղտեխնիկայի ձեռքբերում

29. համայնքում ժամանցային կենտրոնի ստեղծում

30. Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների ստեղծում

31. ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում, բնակչության թվաքանակի կայունացում:

32. համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործում

Աղյուսակ 5. Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),

<i>Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը</i>	<i>ընտանիքների ընդհանուր թիվ</i>	<i>Տոկոսային հարաբերություն %</i>
45	245	18

Աղյուսակ 6. Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

<i>Համայնքում գրանցված բնակիչների թիվ 2015թ.</i>	<i>Համայնքում գրանցված բնակիչների թիվ 2016թ.</i>	<i>Տոկոսային հարաբերություն %</i>
530	545	9

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Դպրաբակ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, ենթակառուցվածքների, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

**Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների
առաջարկում և կոնկրետ խնդիրների ձևակերպում**

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1.

Խմելու ջրագծի արտաքին ցանց 2,5 կմ երկ.90մմ տրամագիծ

Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը	Գետիկ գետի աջ ափի թաղամասի խմելու ջրի բացակայություն						
Ծրագրի անմիջական նպատակ	2,5 կմ երկ.90 մմ տրամագծով նոր ջրագծի կառուցում						
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	10 000 000	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> 2500 մ երկ.60 մմ խորության խրամուղու /տրանշեյ/ քանդում 2500 մ երկ.90 մմ տրամագծով խմելու ջրի համար նախատեսված պլաստմասե խողովակի ձեռքբերում: Ձորակների և հեղեղատների անցման համար տրամագիծը 150 մմ երկ.մոտ 10 մ երկայթյա 4 հատ խողովակի ձեռքբերում: 						
Ծրագրի բյուջեն	կապիտալ ծախսեր` 10 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն` 10 000 000 /տաս միլլիոն /դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի 430 բնակիչ,ամբուլատորիայի շենք,դպրոց,անտառատնտեսության գրասենյակ,գյուղապետարան,վայրի հավաքով զբաղվող կոլեկտիվ տնտեսություն,նախակրթարան,արհեստագործական արհեստանոց,հանդիսությունների սրահ և ռեսուրս կենտրոն:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-ից 2021թթ						
Ծրագրի նկարագրություն	Շուրջորյա որակյալ խմելու ջրի ապահովում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2.

Դպրոցի տանիքի և մարզադահլիճի վերանորոգում և գույքի ձեռքբերում

Պարտադիր խնդիր , որի լուծմանն է միտված ծրագիրը	Դպրոցի տանիքի և մարզադահլիճի վերանորոգում և գույքի ձեռքբերում						
Ծրագրի անմիջական նպատակ	Դպրոցի ազբոշիֆեր տանիքի վերանորոգում						
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	20 000 000	0	0	0	0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Մարզադահլիճի վերանորոգում և գույքի ձեռքբերում						
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	10 000 000	0	0	0	0	
Ծրագրի բյուջեն	կապիտալ ծախսեր` 30 000 000 դրամ						
	Ընդհանուր բյուջեն` 30 000 000 /երեսուն միլլիոն/ դրամ						
Ծրագրի հիմնական շահառուները	Դպրաբակ, Բարեպատ և Չորավանք համայնքների դպրոցականներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-ից 2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ունենալ ժամանակակից դպրոց						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3
Մանկական խաղահրապարակի կառուցում

Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների ժամանցի համար խաղահրապարակի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	1000 մ քառակուսի տարածքի վրա խաղահրապարակի՝ կառուսել,սղարան , ճոճանակ և այլ սարքավորումների կառուցում:						
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	10 000 000	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> 150 գծամետր ցանկապատ խաղահրապարակի պարագաների ձեռքբերում 						
Ծրագրի բյուջեն	կապիտալ ծախսեր՝ 10 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10 000 000 /տաս միլլիոն /դրամ:						

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի նախադպրոցական 60 և դպրոցական 82 երեխաներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-ից 2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երեխաների ժամանցի վայրի ստեղծում:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

Հանդիսությունների սրահի վերանորոգում և անհրաժեշտ գույքի ձեռքբերում

<p align="center">Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը</p>	<p>Համայնքում տարբեր ծիսակատարություններ՝ հողարկավորում, մահվան հետ կապված այլ արարողություններ և տարբեր հանդիսությունների համար սրահի վերանորոգում և համապատասխան սպասքի ձեռքբերում:</p>						
<p>Ծրագրի անմիջական նպատակ</p>	<p>300 մարդու սպասարկելու համար սեղան աթոռների և համապատասխան սպասքի ձեռքբերում:</p>						
	<p>ցուցանիշներ</p>	<p>Ելակետային արժեք</p>	<p>Թիրախային արժեքներ</p>				
		<p>2016</p>	<p>2017</p>	<p>2018</p>	<p>2019</p>	<p>2020</p>	<p>2021</p>
	<p>0</p>	<p>10 000 000</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>
<p>Ծրագրի հիմնական գործողությունները</p>	<p>1. Դահլիճի առաստաղի, հատակի և պատերի վերանորոգում: 2. 300 մարդուն սպասարկելու համար սպասքի՝ ափսեներ, պատառաքաղներ, բաժակներ և այլ անհրաժեշտ սպասքի ձեռքբերում:</p>						
<p>Ծրագրի բյուջեն</p>	<p>կապիտալ ծախսեր՝ 10 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10 000 000 /տաս միլլիոն /դրամ:</p>						

<p>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</p>	<p align="center">Աշխատուժ</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Համայնքի 630 բնակիչ</p>
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ</p>	<p>2017-ից 2021թթ</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Համայնքը ապահովել ժամանակակից ծիսակատարությունների սրահով:</p>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5
ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՏԻԿԱՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ

Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքը չունի և չի ունեցել գազաֆիկացման ցանց					
Ծրագրի անմիջական նպատակ	3 կմ արտաքին ցանց և համայնքի ներքին ցանցի կառուցում					
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	0	50 000 000	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	<p align="center">1. 3000 մ երկ.տրամագիծը 100 մմ երկաթյա խողովակով արտաքին ցանց :</p> <p align="center">2. 3000 մ երկ.տրամագիծը 50 մմ երկաթյա խողովակով ներքին ցանց</p>					
Ծրագրի բյուջեն	<p>կապիտալ ծախսեր` 50 000 000 դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն` 50 000 000 / հիսուն միլիոն /դրամ:</p>					

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի 630 բնակիչ,ամբուլատորիայի շենք,դպրոց,անտառատնտեսության գրասենյակ,գյուղապետարան,վայրի հավաքով զբաղվող կոլեկտիվ տնտեսություն,նախակրթարան,արհեստագործական արհեստանոց,հանդիսությունների սրահ և ռեսուրս կենտրոն:
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-ից 2021թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը ապահովել բնական գազով:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 6

Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում

<p align="center">Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը</p>	<p align="center">Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակ</p>						
<p>Ծրագրի անմիջական նպատակ</p>	<p>10 կմ ներհամայնքային ճանապարհի բարեկարգում՝ խճալցումն հարթեցում:</p>						
	<p>ցուցանիշներ</p>	<p>Ելակետային արժեք</p>	<p>Թիրախային արժեքներ</p>				
	<p>2016</p>	<p>2017</p>	<p>2018</p>	<p>2019</p>	<p>2020</p>	<p>2021</p>	
	<p>0</p>	<p>5 000 000</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	
<p>Ծրագրի հիմնական գործողություններ</p>	<p>1. Խճի բարձում և տեղափոխում 2. Լցված խճի հարթեցում</p>						
<p>Ծրագրի միջանկյալ գործողություններ</p>	<p>18 կմ դաշտամիջյան ճանապարհների մասնակի խճալցում և հարթեցում</p>						
	<p>ցուցանիշներ</p>	<p>Ելակետային և արժեք</p>	<p>Թիրախային արժեքներ</p>				
	<p>2016</p>	<p>2017</p>	<p>2018</p>	<p>2019</p>	<p>2020</p>	<p>2021</p>	
	<p>0</p>	<p>5 000 000</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	<p>0</p>	
<p>Ծրագրի բյուջեն</p>	<p>կապիտալ ծախսեր՝ 10 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10 000 000 /տաս միլլիոն /դրամ:</p>						
<p>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</p>	<p align="center">Աշխատուժ</p>						
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Համայնքի բնակիչներ, ֆերմերներ, անասնապահներ և հողագործներ:</p>						
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ</p>	<p>2017-ից 2021թթ</p>						
<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Համայնքը ապահովել անցանելի ճանապարհներով:</p>						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 7
ԳՅՈՒՂ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Պարտադիր խնդիր որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղ տեխնիկայի բացակայություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Խոտհնձիչ ձեռքի ,խոտհնձիչ տրակտորի, մամլիչ/պրես/ և անվավոր տրակտոր;						
	ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	15 000 000	0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողություններ	1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում						
Ծրագրի բյուջեն	կապիտալ ծախսեր` 15 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն` 15 000 000 /տասնհինգ միլլիոն /դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դրամական ներդրումներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ,ֆերմերներ,անասնապահներ և հողագործներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-ից 2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը ապահովել գյուղ տեխնիկայով` խոտի կուտակման հետ կապված:						

4. ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն
- Համայնքում առկա աշխատուժ
- Այլ աղբյուրներ,

5. ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ

ՀԶՀԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերը և միջոցառումներն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

ՀԶՀԾ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային կամ բնակավայրային ծրագրի ղեկավարն անձնական պատասխանատվություն է կրում ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, համապատասխան ծախսերի կատարման, արդյունքների ստացման, հաշվետվությունների պատրաստման և համայնքի ղեկավարին ներկայացման համար:

ՀԶՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ և տարեկան բյուջեի կառավարումը իրականացնող մարմնի կողմից կիսամյակը մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 9-ում բերվում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարումը իրականացնող մարմնի կողմից կներկայացվի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն ի գիտություն:

Աղյուսակ 9. ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

Ոլորտ.
Ծրագիր.
Միջոցառում.

Արդյունքային ցուցանիշները		2016 թ., 1-ին կիսամյակ / տարեկան			
տեսակը	անվանումը	պլան.	փաստ.	շեղում	մեկնաբանություն
Մուտքային					
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)					
Արդյունավետության					
Ծախսեր, հազ. դրամ					

ՀԶՀԾ-ի վերահսկումը

ՀԶՀԾ-ի վերահսկողությունն ապահովում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու

ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար: ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝

- ՀԶՀԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
- ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
- ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում,
- ՀԶՀԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, միջոցառումների և նախատեսված արդյունքների հետ:

ՀԶՀԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի տարեկան և հնգամյա գնահատումը

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարում են համատեղ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարումն իրականացնող մարմինը՝ հիմնվելով ՀԶՀԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքի համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, այնուհետև՝ համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնակավայրին վերաբերող ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

Համայնքում անցկացված հանրային քննարկումների արդյունքներով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարումն իրականացնող մարմինը լրամշակում է ՀԶՀԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՀԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶՀԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

նքների վրա

ՀԶՀԾ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշումն ընդունվում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Դպրաբակ համայնքի սույն զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքապետարան աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների և բնակիչների մասնակցությամբ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶՀԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի), ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, ՔՀՄՀ կազմակերպությունների և խմբերի, գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՀԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

